տարաւ օտար աշխարհներ եւ վարժեցրեց խաչագողութեան մէջ: Իսկ Կարօն, Ասլանը եւ Սագօն հետեւեցին որսորդի խորհրդին, թէեւ, նոյնպէս օտար աշխարհներ գնացին, բայց իր նման չփչացան, այլ, կրթութիւն ստանալով, լաւ մարդիկ դարձան:

Զարմանալի՜ պատմութիւն էր այդ. դա թափառաշրջիկ, բախտախնդիր ժողովրդի տխուր պատմութիւնն էր, որի մէջ այդ ժողովրդի իւրաքանչիւր անհատը կարող էր գտնել իր մռայլ պատկերը...

— Ուրեմն դուք ձեր պատանեկութեան հասակից ծանօ՞թ էք եղել Ասլանի ու նրա ընկերների հետ, — հարցրի ես, երբ նա վերջացրեց իր պատմութիւնը:

— Այո՛, իմ պատանեկութեան հասակից, — պատասխանեց նա: — Բայց, որպէս պատմեցի ձեզ, մենք անջատուեցանք միմեանցից, մեր ճանապարհները բաժանուեցան, որսորդ Աւօն առաջնորդեց նրանց դէպի լաւը, իսկ քաւոր Պետրոսը առաջնորդեց ինձ դէպի վատը: Երկար թափառումներից յետոյ դարձեալ մեր ճանապարհների ծայրերը միացան միմեանց եւ դարձեալ մենք ձեռք մեկնեցինք միմեանց...

— Բայց ինչպէ՞ս եղաւ, որ դուք ուղղուեցաք եւ ետ դարձաք վատ ճանապարհից:

— Ես անցայ այն բոլոր մթին, ոլորմոլոր շաւիղները, որոնց մէջ պտտւում է խաչագողը. ես անցայ այն բոլոր շրջանները, որոնց մէջ լայնանում է, զարգանում է խաչագողի ընդունակութիւնը. յետոյ բռնուեցայ իմ յանցանքների մէջ եւ աքսորուեցայ: Այնտեղ, իմ հեռաւոր աքսորավայրում, ես ծանօթացայ մի լաւ մարդու հետ, որ նոյնպէս աքսորած էր: Այդ մարդը իմ վրայ խիստ բարերար ազդեցութիւն ունեցաւ եւ ուղղեց ինձ:

— Ո՞վ էր այդ մարդը, ինչպէ՞ս էր նրա անունը:

— Նա մի շատ խորհրդաւոր անձնաւորութիւն էր. ես մինչեւ այսօր էլ չգիտեմ նրա իսկական անունը. բայց բոլոր դատապարտեալները նրան կոչում էին «համր», որովհետեւ խիստ սակաւ էր խօսում:

Գիտէ՞ք հիմա որտեղ է նա:

— Չգիտեմ...

Այժմ ես բոլորովին համոզուեցայ, որ խաչագողը, լաւ մարդկանց ազդեցութեան ներքոյ, լաւ հասարակութեան մէջ, կարող է կրթուել եւ լաւ մարդ դառնալ: Բայց ես դեռ կասկած ունէի քաւոր Պետրոսի մասին, երբ հարցրի, Մուրադը պատասխանեց ինձ.